


ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ՈՐՈՆՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՑՑ

ՀՀ սահմանադրական դատարանի 1996-2015թթ. որոշումների շտեմարանում առկա են «ՀՀ ՄԴ որոշումներ» բաժինը, որը ներառում է 1233 ըստ էության որոշում, 883 աշխատակարգային որոշում, 469 դատական կազմերի որոշում եւ «Այլ նյութեր» բաժինը, որն ընդգրկում է «Հիմնական սահմանադրական հասկացությունների անգլերեն-ռուսերեն-հայերեն բառարան» (474 բառ եւ արտահայտություն), «Հիմնական սահմանադրական հասկացությունների ցանկ» (474 հիմնաբառ եւ արտահայտություն), «ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներ», «ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ» ենթաբաժինները:

Որոնումը կատարվում է՝ ըստ համապատասխան բաժինների, ենթաբաժինների, որոշումների ընդունման տարեթվերի, դիմող կողմի, վեճի տեսակի, ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության կամ անհամապատասխանության:

Որոնման ծրագրի ինտերֆեյսը

Ծրագրի ինտերֆեյսը կազմված է այնպես, որ բոլոր գործիքները մատչելի եւ ընկալելի լինեն նույնիսկ համակարգչից օգտվելու քիչ փորձ ունեցող իրավաբանների համար: Ծրագրի աշխատանքային պատուհանը բացվում է "run sdvsearch"-ի վրա սեղմելով (տես՝ նկար 1):



Նկար 1. Որոնման ծրագրի առաջին էջի պատուհանը

Ինտերֆեյսը կազմված է չորս բաժիններից, որոնք հնարավոր է ցուցադրել/թաքցնել սեւ սլաքներով կոճակների միջոցով.

1. պատուհանի վերին ձախ անկյունում գտնվում է որոնման գործակիցների բաժինը: Որոնվող փաստաթղթի նվազագույն եւ առավելագույն չափը եւ ընդլայնումը հնարավոր է սահմանել:

2. պատուհանի վերելի աջ անկյունում գտնվում է որոնման վանդակը եւ արդյունքների ցուցադրման դաշտը: Որոնման վանդակից աջ տեղադրված են լրացուցիչ կոճակներ, որոնք թույլ են տալիս կանչել կարգավորումների եւ օգնության պատուհանները, ինչպես նաեւ թաքցնել ծրագրի պատուհանը:

3. պատուհանի ստորին ձախ անկյունում որոնման տարածքն է: Այդ տարածքում գտնվում են բոլոր ինդեքսավորված թղթապանակները աշխատանքային փաստաթղթերով:

4. պատուհանի ներքելի աջ անկյունում տեղադրված է ընտրված փաստաթղթի նախադիտման ենթապատուհանը: Ցանկացած ընտրված փաստաթղթի բովանդակությունը անմիջապես ցուցադրվում է ենթապատուհանում, իսկ որոնվող բառը կամ արտահայտությունը կարելուրվում է գույնով:

Որոնման տեսակները

Պարզ որոնում

Սեղմելով "+" նշանի վրա ցուցադրվում է թղթապանակի կառուցվածքը եւ ամբողջ պարունակությունը: Ըստ նախնական կարգավորումների բոլոր ինդեքսավորված թղթապանակները նշված են պատուհանում: Սակայն, միշտ կարելի է սահմանափակել որոնումը՝ նշելով միայն պահանջվող թղթապանակը կամ փաստաթուղթը:


Ընտրենք ամբողջ թղթապանակը եւ կատարենք առաջին որոնումը: Մուտքագրենք **"օրենք"** հիմնաբառը որոնման վանդակում եւ սեղմենք "Որոնում" կոճակը (տես՝ նկար 2):

Ծրագիրը ցուցադրում է ցանկ 84 փաստաթղթերից (տես՝ ներքելի ձախ անկյունում "Results" բառը), որոնցում որոնման հիմնաբառը հայտնաբերվել է ճիշտ նույն ձևով:

Բոլոր փաստաթղթերը դասակարգվում են ըստ գտնված արդյունքի, հիմնաբառի կամ բառակապակցության քանակի նվազման, որը տոկոսայնորեն արտահայտում է կարելուրության աստիճանը յուրաքանչյուր փաստաթղթում: Օրինակ, առավելագույն տոկոսային համապատասխանությունը - 19%-ն ստացել է փաստաթուղթը, որտեղ որոնման հիմնաբառը հայտնվել է երեք անգամ (տես՝ նկար 2):

Եթե ցանկում ընտրենք այդ փաստաթուղթը եւ բացենք այն, ապա դրա բովանդակությունը կցուցադրվի նախադիտման պատուհանում, եւ առաջին հայտնաբերված բառը կնշվի կապույտ գույնով: Հետագա հայտնաբերված բառերը կնշվեն դեղինով: Արագ

անցումների համար պետք է օգտագործել նախադիտման պատուհանի վահանակի վրա գտնվող "վեր" ու "վար" սլաքները:



Նկար 2. Պարզ որոնման տեսակի պատուհանը


Նույն վահանակի վրա կան նաև երկու կոճակներ, որոնք թույլ են տալիս անջատել արդյունքները գույնով նշելու տարբերակը եւ ակտիվացնել/ապասկտիվացնել HTML-ով դիտարկումը (եթե առկա է այդ տեսակի փաստաթուղթ): Ցուցակում գտնվող ցանկացած փաստաթուղթ կարելի է բացել կրկնակի սեղմումով կամ պատճենել ցանկացած խմբագրող ծրագրի մեջ (օրինակ՝ MS Word)՝ օգտագործելով "Copy" (Ctrl+C) եւ "Paste" (Ctrl+V):

Հատուկ որոնում

Ծրագրում հնարավոր է որոնում կատարել ոչ միայն պարզ հարցումներով, այլ նաև օգտագործելով մի շարք հատուկ կարողություններ, որոնք թույլ են տալիս ներառել /բացառել որոշակի բառերը որոնման արդյունքներում, որոնել անստույգ համապատասխանություններ, եւ այլն: Որոնումը ընդլայնելու նպատակով կարելի է օգտագործել հատուկ նիշեր "?" , "*" :

Օրինակ "?" հատուկ նիշը փոխարինում է մեկ ցանկացած տառ (օրինակ՝ **օրենքի, օրենքը**) (տես՝ նկար 4): Այսինքն, տեղադրելով այն որոնվող բառի վերջում, հնարավոր է գտնել որոշումներ, որտեղ կան բառի տարբեր ձևեր եւ փոխվում է միայն վերջին տառը:

Սակայն, հարկավոր է հիշել, որ **"օրենք?"** հարցման ժամանակ ճիշտ **"օրենք"** բառը չի գտնվի:




Նկար 3. Հատուկ որոնման տեսակի պատուհանը ("?" հատուկ նիշը)

Ավելի ճկուն որոնման համար հարկավոր է օգտագործել "*" հատուկ նիշը:


Այն թույլ է տալիս գտնել որոնմանը լիովին համարժեք կամ տարբեր վերջավորություններով (բաղկացած է ոչ թե մեկ, այլ մի քանի տառերից) բառերը (օրինակ՝ **օրենքին, օրենքով, օրենքում**) (տես՝ նկար 4):

Բացի հատուկ նիշերից, ծրագրում հնարավոր է նաև օգտագործել այլ օպերատորներ.


- **"AND", "OR", "NOT"**, որոնք թույլ են տալիս որոնել երկու հիմնաբառեր միաժամանակ, կամ հիմնաբառերից մեկը, կամ մեկ հիմնաբառը բացառելով: Օրինակ, **"հակասող AND անվավեր"** կգտնվեն բոլոր այն որոշումները, որտեղ կան **"հակասող"** եւ **"անվավեր"** բառերը (տես՝ նկար 5), **"հակասող OR անվավեր"**՝ այն որոշումները, որտեղ առկա է առնվազն մեկ բառը՝ **"հակասող", "անվավեր"** (տես՝ նկար 6), **"հակասող NOT անվավեր"**՝ այն որոշումները, որտեղ առկա է միայն **"հակասող"** բառը, բացառելով **"անվավեր"** բառը (տես՝ նկար 7),




Նկար 4. Հատուկ որոնման տեսակի պատուհանը ("*" հատուկ նիշը)



Նկար 5. Հատուկ որոնման տեսակի պատուհանը (օպերատոր AND)




Նկար 6. Հատուկ որոնման տեսակի պատուհանը (օպերատոր OR)




Նկար 7. Հատուկ որոնման տեսակի պատուհանը (օպերատոր NOT)

- Եթե մուտքագրել որոնվող բառը կամ արտահայտությունը **չակերտներով** (օրինակ՝ **"հակասող"**, **"հակասող եւ անվավեր"**), կգտնվեն այն որոշումները, որոնք պարունակում են ճիշտ այդ բառը՝ **"հակասող"** կամ բառակապակցությունը՝ **"հակասող եւ անվավեր"** (տես՝ նկար 8),




Նկար 8. Հատուկ որոնման տեսակի պատուհանը (չակերտներ)

- **հատուկ նիշ "+"** ցույց է տալիս, որ նշված բառը գերակա է, իսկ որոնման մնացած բառերը կարող են բացակայել: Օրինակ, հետեւյալ հարցումը՝ **"հակասող անվավեր"** կբերի առաջին հերթին բոլոր որոշումները, որտեղ կան այդ երկու հիմնաբառերը, ապա նրանք, որտեղ առկա է միայն **"հակասող"** բառը (տես՝ նկար 9): Եթե որոնման բոլոր բառերին ավելացնել "+" (օրինակ՝ **"հակասող +անվավեր"**), արդյունքը համարժեք կլինի **"AND"** օպերատորի օգտագործմանը,
- **հատուկ նիշ "-"** ցույց է տալիս, որ նշված բառը բացառվում է որոնումից: Օրինակ, հետեւյալ հարցումը՝ **"-հակասող անվավեր"** կբերի բոլոր որոշումները, որտեղ առկա է **"անվավեր"** հիմնաբառը, բացառելով **"հակասող"** բառը (տես՝ նկար 10):



Նկար 9. Հատուկ որոնման տեսակի պատուհանը ("+" հատուկ նիշը)




Նկար 10. Հատուկ որոնման տեսակի պատուհանը ("- " հատուկ նիշը)

Կարգավորումներ

Մեղմելով որոնման վանդակից աջ գտնվող կոճակի վրա, բացվում է ծրագրի կարգավորումների պատուհանը: Փոխելով կարգավորումները՝ հնարավոր է կառավարել ծրագրի ինտերֆեյսն ու որոնման դաշտը (տես՝ նկար 11):

1. "Show manual on startup" – ցույց տալ ուղեցույցը ծրագիրը բացելուց;
2. "Use OR operator as default in queries (instead of AND)" - որոնման ժամանակ ի սկզբանե կիրառել «OR» օպերատորը («AND» –ի փոխարեն);
3. "Automatically scroll to first match in preview pane" - ինքնաբերաբար ընդգծել առաջին համապատասխանությունը նախադիտման պատուհանում;
4. "Hide program in System Tray after opening files" - փաստաթղթերը բացելուց հետո թաքցնել ծրագրի պատուհանը՝ "System Tray"-ում;
5. "When closing program window, hide the System Tray instead of exiting"- փակելով ծրագրի պատուհանը՝ թաքցնել "System Tray"-ում՝ ծրագրից դուրս գալու փոխարեն;
6. "Clear search history on exit" - ջնջել որոնման պատմությունը ծրագրից դուրս գալու ժամանակ;
7. "Highlight color" – ընտել հայտնաբերված հիմնաբառի գույնը;
8. "Preview font" – փաստաթղթերի տառատեսակը եւ տառերի չափը:



Նկար 11. Կարգավորումների պատուհանը

© ՀՀ սահմանադրական դատարան, 2015

Որոնման օրինակների աղյուսակ

Որոնման հիմնարար	Արդյունքում կգտնվի...
օրենք	ճիշտ "օրենք" բառը
օրենք*	օրենքի, օրենքով, օրենքում, օրենքները
օրենք?	օրենքի, օրենքը
հակասող AND անվավեր	և "հակասող", և "անվավեր" կամ "հակասող", կամ "անվավեր"
հակասող OR անվավեր	կամ "հակասող", կամ "անվավեր"
հակասող NOT անվավեր	"հակասող", բացառելով "անվավեր"
"հակասող եւ անվավեր"	ճիշտ "հակասող եւ անվավեր" բառակապակցությունը
+ հակասող անվավեր	պարտադիր "հակասող" եւ մի գուցե "անվավեր"
- հակասող անվավեր	"անվավեր", բայց ոչ "հակասող"
+հակասող +անվավեր	պարտադիր և "հակասող", և "անվավեր"

Գրականություն

Մենագրություններ

1. Арутюнян Г., Мавчич А. "Конституционный контроль и его развитие в современном мире (сравнительный конституционный анализ)". Ереван-Любляна, 1999, <http://www.concourt.am/armenian/library/cclibrary/1999/009.doc>.
Арутюнян Г. "Конституционный Суд в системе государственной власти (сравнительный анализ)". Ереван, "Нжар", 1999, <http://www.concourt.am/armenian/library/cclibrary/1999/008.doc>.
2. Ваганян Г., Бляян В. "Информационные технологии в правовой деятельности (в системе государственной службы)". Ереван, "Нжар", 2005, <http://www.iatp.am/it/itlaw/>.
3. Ваганян Г., Ваганян О. Виртуальные технологии менеджмента (системотехника электронного управления). Ереван, "Нжар", 2005, <http://www.iatp.am/it/virtualmanag/>.

Հոդվածներ

4. Ваганян Г. "Новая компьютерная технология для анализа, сравнения и синтеза правовой информации". Международный журнал "Конституционное правосудие", Ереван, N1, 1998г.
5. Ваганян Г. Специальный научный доклад на семинаре, организованном юридическим факультетом Мексиканского государственного университета и Комиссией по Правам человека, Мехико, 1998г.
6. Harutyunyan G., Vahanyan G. "New computers technology for analysis, comparison synthesis of legal information". Fifth World Congress "Constitutionalism, Universalism and Democracy", Rotterdam (Netherlands), 1999.
7. Ваганян Г. "Международное сотрудничество Конституционного Суда Республики Армения". European Commission for Democracy Through Law (Venice Commission) Conference of Secretaries General of Constitutional Courts and bodies of equivalent jurisdiction, Kyiv, Ukraine, 25-26.11.1999, Collection of reports.
8. Ваганян Г., Бляян В. "Информационные технологии в Конституционном Суде Республики Армения". Вестник Конституционного Суда Республики Армения. N1, 2001г.
9. Vahanyan G. "Access to the Law", International Conference "E-Development for the Caucasus". Yerevan, Armenia, 15-16 April, 2002.
10. Арутюнян Г. "Новые технологии, электронная демократия и конституционные суды", Международная конференция, Афины. 3-4.06.2005, <http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2005/044.pdf>.
11. Ваганян Г., Бляян В. "Автоматизированное рабочее место "право" в системе образования и науки", XII Всероссийская научно-методическая конференция "Телематика-2005", Санкт-Петербург, 6-9 июня 2005г., http://www.iatp.am/news/ite2005/ARM_Pravo_abstract.doc.